

ների առթիւ այսքան մանրամասն խօսելուց յետոյ՝ այժմ զրի առ-
նենք արդի Շարականի և 1588 ու 202 ձեռագրերի բաղդատու-
թեան միմիայն արդիւնքը՝ առանց երկար ու բարակ բացատրու-
թիւնների Բանի որ 1588 ձեռագիրը իւր հեղինակացոյցով և ար-
ձակ ու կրճատ գրութեամբ կամենում է ցոյց տալ, թէ շարական-
ներից որն է հին և որը՝ նոր. քանի որ նա յետին ժամանակի՝ օ-
րինակի համար Յակոբ Կլայեցու, Վարդան վարդապետի և նոյն
խոյն Ներսէս Շնորհալու՝ աշխատութիւնները զրի է առնում արձակ
ձեռք՝ հետաքրքրական է իմանալ, թէ մեր արդի շարականներից
ըստ այդ ժ.Գ—ժ.Դ դարի աւանդութեան որոնք են հին և որոնք՝
նոր. Այս աշխատանքը կատարելուց յետոյ մեզ կրմնայ կցել մի
ցուցակ այն բոլոր շարականների, որոնք, կրճատ թէ արձակ, գրուած
են 1588-ում, բայց այժմ անգործածական են։ Նախ ամենայն ճշգու-
թեամբ պահպանենք արդի տպագիր Շարականի դասաւորութիւնը
և մի ամբողջական պատկեր տալու նպատակով իւրաքանչիւր կա-
նոնի, շարքի և առանձին շարականի առթիւ հէնց իւր տեղն էլ յի-
շատակենք, թէ ինչ վկայութիւն է տալիս 1588 համար ձեռագի-
րը, եթէ մի շարական այստեղ արձակ է գրուած՝ ապա ըստ այս
ձեռագրի կամ ժ.Գ—ժ.Դ դարում եղած մի աւանդութեան այդ նոր
է, իսկ եթէ կրճատ է՝ ապա ըստ նոյն 1588-ի կարծեաց և կամ
աւանդութեան հին է, այսինքն Ներսէս Շնորհալուց ասած արդէն
եղել է։

կը շարունակուի.

Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեան

ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Կովկասեան Թեմական սեղեկագիրը (1885 թ. № 18)
հետաքրքիր սեղեկութիւններ է տալիս 1845 թ. Ներսէս
Ե-րդ Կաթողիկոսի Սաւրօպօլ այցելութեան մասին։

Ռուսաց երեմիա եպիսկոպոսը գրում է.—

«1845 թ. Սեպտեմբերի 5-ին Կիշենեովից Ս. Էջմիածին
գնալիս Սաւրօպօլ այցելեց Հայոց եկեղեցւոյ պատրիարք Ներ-
սէսը, մի յարգարժան, համարեա ութսունամեայ, մարմնով ա-
ռողջ և հոգւով արի ծերունի, որի անձնաւորութիւնը, առաւելա-
նը և գիւրքը ամեն մի բարեհոգի ռուս անձնաւորութեան սրտի
մէջ առաջ է բերում ակնածութեան զգացմունք։

Ս.մոյս 6-ին, Թագաւոր Կայսեր անուանակոչութեան
օրը, Նորին Սրբութիւնը, իւր եկեղեցւում եղած Հայոց ժա-

մերգութիւնից յետոյ, ըսեց ս. պատարագ և մողթանք մեր մայր եկեղեցում, որտեղ իւր տալիճանին համապատասխան պատուաւոր ընդունելութիւն էր տրուած:

Պատարագից յետոյ Նորին Սրբութիւնը, տեղիս զինւորական ըարձրաստիճան տնձնաւորութիւնների հետ այցելեց ինձ իմ խուցը, ուր խմեց մի գաւաթ շամպանեան գինի Նորին Մեծութեան կենացը: Ժամը երկուսին ես փոխ այցելութեան գնացի նրան իր ընտանեացւում, որը գտնուում էր Վարաբեօվ-կայում պոլիովնիկ Կուսակովի տանը, իսկ այնտեղից ժամը երեքին միասին գնացինք հրամանատար, գեներալ Նիկոլայ Սաեպանովիչ Զաւաբովսկու մօտ ճաշի, ի պատիւ Թագաւոր կայսեր և իրեն Նիկոլայ Սաեպանովիչի տօնի:

Պատրիարքը, կարելի է ասել, հեռու է ամեն տեսակ խմիչքներից, դրա համար էլ առողջ է: Մինչև 33 տարեկան հասակը զինքն համը չգիտէր, շնայած որ ափսոցիների մէջ, բացի մահմեդականներից, գինին սովորական խմիչք է:

Նորին Սրբութեան վիճակը մասամբ նշանութիւն ունի նուաստութեանս վիճակին: Տոտն և եօթն տարի Տիխոնի արքեպիսկոպոս լինելուց յետոյ, նա աւելորդ էր համարուել Անդր-կովկասի համար, ինչպէս և ես Կովկասի համար, և այն ժամանակուայ գլխաւոր հրամանատարի առաջարկութեամբ հեռացուած էր Բեսարաբիա պատուաւոր կերպով: Այժմ ձըշմարտութիւնը յողթեց և արհամարհուած քարը եղաւ անկեան գլուխ:

Յարգարժան ծերուկը, իմ նրա հետ ունեցած չորս անգամուայ տեսակցութեանս ժամանակ, դատում էր ինձ հետ հայոց և յունաց կրօնների հաւատոյ գաւառութեան մասին և պատմեց, թէ ինչպէս նա մինչև 1830 թ. լինելով Արարատեան պատրիարքարանում աւագագոյն անդամը, Ս. Էջմիածնի տաճարում ընդունել էր պարսից շահի ժառանգին և որդուն և թէ ինչպէս ձի հեծած մասնակցել է ռուսաց զօրքի պարսից դէմ ունեցած ամենադժուար յարձակումներում:

Պատմում էր, թէ ինչպէս Ս. Էջմիածնի տաճարում կարդա-գրուած է ընդ միշտ յիշատակութիւն՝ տաճարը վերկող ընկած ռուս զօրքերի համար: Հաճութեամբ յիշում էր ինձ յայտնի Կրասովսկի գեներալին:

Ա. Հաւատոյ դաւանութեան մասին երկու խօսք.

Մենք պէտք է իրար սիրենք, ասում էր, թէ՛ որպէս մարդ և թէ՛ մանաւանդ որպէս հաւատակիցներ: Ես առարկեցի:

— Եթէ հաւատաւորացնէր ենք, ինչու միտաւել չենք աղօթում և ինչու չենք ոչնչացնում մեզ բաժանող ամեն տեսակ արգելքները և միանում: Այս առթիւ վարպետ ծերունին պատմեց յարաց էկզարխ Թէօթիլակտի հետ տառն և եօթն տարի առաջ ունեցած խօսակցութիւնը, որը հետեւեալն էր.

«— Միթէ մեզ (հայ և ռուս) մի մար է ծնել:

— Ոչ:

— Հասար ինչպէս ամեն բանի մէջ միանանանք. ո՞ւմն էք դուք հաւատում:

— Յիսուս—Քրիստոսին:

— Իսկ մենք:

— Դուք էլ հաւատում էք Յիսուս Քրիստոսին:

— Ուրեմն ինչի մէջ միանանք:

Ինձ այս սոսկեատուութիւնը դուր չեկաւ: Նա շարունակեց.

— Ասացէք խնդրեմ, ինչու են մեզ յոյները արհամարհում, ինչու են մեզ անուանում անուղղամիտներ: Եւ որ քրիստոնէական ամբողջ հաւատք բացատրուած և հաստատուած է առաջի երեք տիեզերական ժողովներում: Միթէ մենք, հայերս էլ, այնպէս ճշտութեամբ չենք պահում այն հաւատքը, ինչպէս պահում են յոյները, դուք. որ ընդունուած է երեք տիեզերական ժողովներում: Ինչով ենք մենք մեղաւոր:

— Նրանով, պատասխանեցի ես, որ դուք չը բարեհաճեցիք լինել յեառգայ տիեզերական ժողովներում և դրա համար էլ ձեզ յայտարարեցիք տիեզերական եկեղեցւոյ անհնազանդներ և ինքներդ ձեզ դեցեցիք այն մտքերի մէջ, որոնց դէմ էին այդ ժողովները:

Բ. Հետաքրքիր և պատից ճանի որդու այցելութիւնը Լշմիածնի Տանաթին

— «Կարելի է բարձրանալ ձեր սեղանը», այս հարցով, տառում է ներսէօք, շահի որդին դրեց ինձ դժուար կացութեան մէջ: Ըստ Սրբութիւն սրբոցի թոյլ տալ չէր կարելի. արգելելով՝ անմիջապէս հանած կը լինէի ներկայ պարսիկների որերը պատեանից: Ես դիմում եմ եպիսկոպոսների ժողովին և խորհրդակցում: Խորհրդակցութիւնից յետոյ, ահա մեր պատասխանը.

— Այ ոքի չի կարելի բարձրանալ, իսկ դու թագաւորի, Աստուծոյ օծեալի որդի ես, մտի՛ր:

— Կարելի է համբուրել ձեր այս սուրբ գիրքը, (սեղանի վերայի աւետարանը):

Կարելի է համբուրել, միայն ջերմեռանդութեամբ:

կարելի՞ է բանալ:

Կարելի է. բայց է անուամ այն տեղը, ուր նկարած էր կոյր ծնածի բժշկութիւնը:

— Ահա, տոում եմ, Գրիստոսը բացում է կոյրի աչքերը. բանում է դարձեալ և գտնում Ղազարոսի յարութիւնը:

— Ահա այս էլ Գրիստոսը յարութիւն է տալիս մեռեալին:

Երկու պատկերն էլ ջերմեռանդութեամբ համբուրեց:

Լսելով պատրիարքի օժման խորհրդի վեհութեան մասին՝ 6 կամ 12 եպիսկոպոսի ձեռքով, որոնք միասին օծեալի գլխի վրայ գնելով իրանց բութ մատերը, շրջեցնում են գլխի վրայ (կարծես մագնիսացնելով) և քսում ս. միւսոնը, որը առատ թափւում է 6 կամ 12 եպիսկոպոսներից աւագագոյնի ձեռքով. — Լսելով այս, ես զարմացայ, թէ էլ ի՞նչու նա յապաղեցնում է ընդունել այս օժումը, քանի որ նա պատրիարքական աթոռի համար ընտրուած է դեռ ևս 1843 թ. և ես իմացայ, որ նա ցանկութիւն չունէր պատրիարք գառնալու և միշտ հրաժարուում էր և թագաւորից հաստատութիւն ոտացաւ այն ժամանակ, երբ ուշաթափ պառկած էր մահուան անկողնի մէջ և իւր հաստատութեան մասին լսեց միայն մի ամսից յետոյ, երբ նոր էր ուշքի եկել:

Աստուծոյ

Սահակ Բախ. Տէր Յովհաննիսեանց

Սրբազրութիւններ եւ Ենթազրութիւններ:

1. «Ի կայսերական քաղաքէն թէ «քաղաքին»:

Գերապատիւ Մ. Օրմանեանն տոում է. «Թագուհու Զարմանդուխտ անունը (Բուզանդ Ե, 1է-ը, էջ 251—255, Վենետիկ 1889) հայ կարծեցնել կուտայ զինքն, բայց Խորենացի «Ի կայսերական քաղաքէն» էր կըսէ (Խոր. Գ, ԽԲ, 232, Վենետիկ 1865), գուցէ տղայոց (Արշակի և Վաղարշակի) յոյն մեծ մայրը [=տաւր] իրենց մօրը հետ փոխանակելով»¹:

Մի կողմ թողնելով այն, որ ոչ մի հիմք չկայ մեր Պապ թագաւորին յոյն Ոլիմպիադայի որդին համարելու և Զարմանդուխտի ծագումը, որ Սէն-Մարտէնին էլ անյայտ է մնացել²,

1. Գ. Գարու հայ եկեղեցին. Գ. Ներսէս Մեծի յաջորդները, էջ 45, (Արտատպած «Լուսնայ հանդիսից» Թիֆլիս 1905):

2. Lebeau, Histoire du Bas—Empire. Tome iv, livre xix, § XVIII, էջ 27. Paris, M. Decq. XXIV.